Բարև,ես Էլինան եմ՝ 19 տարեկան:Ծնվել եմ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում: Ուսումնասիրում եմ հայոց լեզու և գրականություն: Շատ եմ սիրում երեխաներին , աշխատում եմ նրանց հետ, և նրանց ուսուցանում հայոց լեզու: Շատ եմ ուզում դառնալ ուսուցչուհի, քանի որ սիրում եմ ուսուցչի աշխատանքը: Սկզբում երազում էի դառնալ լրագրող հարցազրույցներ կազմակերպելու համար , բայց ուսուցչի աշխատանքը ինձ ևս շատ հետաքրքրում է:

Իմ գյուղը սահմանամերձ է , այն ինձ համար հիանալի է , մարդիկ այնտեղ հիմնականում զբաղվում են անասնապահությամբ: Գյուղը ունի դպրոց, ակումբ, բուժկետ:Այստեղ կարող ենք տեսնել Վաղուհասի վանքի 12-րդ դար ոչ շատ հեռու է , Կարմիր վանքի վանական համալիրը 13-րդ դար ,Սուրբ Աստվածամոր եկեղեցին 12-13-րդ և այլ գեղեցիկ վանքեր: Մենք բոլորս ունեինք երազանքներ և ապրում էինք հանգիստ ու անկախ մինչև սեպտեմբերի 27-ը:Այդ օրը ես սարսափահար արթնացա պայթուններից և իմացա, որ թշնամին նորից հարձակվել է մեր սահմանների վրա: Թշնամին ամենուր տարբեր զինամթերք է կիրառում , դա ահավոր էր: Այդ ահավոր և անբացատրելի իրավիճակում ես որոշեցի գնալ իմ քույրիկի տուն Ասկերանի շրջանի գյուղ Ավետարնոց : Ավետարանոցը այսօր թշնամու վերահսկողության տակ է : Մենք մնացինք այնտեղ հինգ օր, բայց ի վերջո հասկացանք, որ մենք պիտի լքենք գյուղը, քանի որ թշնամու անօդաչուները պտտվում էին ամենուր գյուղում:Այդ չար պատերազմի պատճառով քույրս և համալսարանի ընկերներս կորցրել են իրենց գյուղերը: Նրանք բոլորը կոտրված են, նրանք շատ են կարոտում իրենց գյուղը և հույս ունեն մի օր այնտեղ վերադառնալու:

Աստված մեզ հետ է և մենք ունենք պարտավորվածություն,այն է բարգավաճի մեր երկիրը, մեր Արցախը: Ես խաղաղություն եմ մաղթում ,ինչպես նաև միություն բոլորին:

Էլինա 19 տարեկան